

Ն. Մ Ա Ռ.

Պիտանի ընթերցուածք նախնի հայերէն ընդ որում բառարան
Հայ-Ռուսերէն ի պէտս նորավարժից, Ս. Պետերբուրգ, 1893:

—

Գրաբար լեզուն եւրոպական համալսարաններում դաս տւան-
գե.իս մինչեւ վերոյիշեալ Ն. Մառի գիրքը երէք շատագրքերով է
կատարուել. 1) Petermann, Brevis linguae armenicae grammatica,
litteratura, chrestomatia cum glossario, Lipsiae, 1872. 2) M. Lauer,
Die armenische grammatik. 3) Carrière-ը թարգմանել է լատէրի
քերականութիւնը ֆրանսերէն լեզուով, պ. Մառն էլ գրել է իւր
գիրքը իւր լսողների համար, որոնք Պետերբուրգի համալսարանի
արեւելեան մասում են լսում: Գիրքը բաղկացած է երկու մասից.
առաջին մասի մէջ ընթերցանութեան կտորներ են՝ վերցրած մեր
թէ թարգմանական և թէ ինքնուրոյն հին հեղինակներից, որոնք
բոլորն էլ արձակ են բացի մի կտորից՝ Ներսէս Շնորհալու «Ողբ
Եգեսիդ» և Վարդան Մեծի սրբոյն Սարգսի զաւրաւարի Շարա-
կանից, իսկ երկրորդ մասը բառարան է: Նա ուղղագրութեան
մէջ պահպանել է այժմ գործածական է- և օ ի տեղ է- և ա-
հին գրութիւնը, որը թէև ուղիղ է, բայց կարող է լեզուն նոր
սովորողներին շփոթել, քանի որ մեր գրքերը փոխուած ուղ-
ղագրութիւն ունին: Պատրաստ ունի նաև «Հին հայերէնի սկզբ-
նական քերականութիւնը»: Յուսանք որ նա իւր ձեռնարկներով
գիւրացներով և ուս ուսանողների գործը կարող է պատճառ դառ-
նալ, որ նոցանից շատերը սովորեն հայերէն քան այդ պատա-
հում է:

Հ Ա Շ Ի Ի

Գանձակու Ս. Յովհաննէս մայր եկեղեցւոյ վասն 1891 և 1892 ամաց,
Գանձակ, 1893:

—

Աւելորդ է առանձին կերպով շեշտել ցոյց տալու համար՝ թէ
ինչքան գովելի և միանգամայն հետևողութիւն գտնելու արժա-